

ԵՐԵՎԱՆԻ ԵՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ

ՄՇԱԿ

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

Տարեկան գինը 10 ռուբլի. կես տարվանը 6 ռուբլ. Առանձին համարները 5 կոպեկով.

Թիֆլիսում գրվում են խմբագրատան մէջ.

Մեր հասցեն. Тифлисъ, Редакция „Мшакъ“. Կամ Tiflis, Rédaction „Mschak“. Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

Պարտադրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ (բացի կիրակի և տօն օրերից).

Ցայտարարութիւն ընդունվում է ամեն լիզուով.

Ցայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպեկ. Տ է Լ է Ֆ օ Ն № 253.

ԲՈՎԱՆԴԱՅՈՒԹԻՒՆ

Պարտադրութիւն գէպի ժողովուրդը.—ՆԵՐ-ԲԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Մասուլ. Երկրորդ միջազգային կոնգրէս կրօնների ընդհանուր պատմութեան. Ներքին լուրեր.—ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Պատերազմի շուրջը. Թիւրքական գործերի շուրջը. Տեղեկութիւններ Պարսկաստանի մասին. Արտաքին լուրեր.—ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.—ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ.

ՊԱՐՏԱՔԻՆ ԴԵՊԱՐՏՄԵՆՏԻ ԴԵՊԱՐՏՄԵՆՏԻ

Պարսկաստանի զանազան տեղերում երևեցած խօսքայի մասին մենք մինչև այժմ չունենք ստույգ թուանշաններ: Այնտեղ, ուր մի գիտող հաշուում է 100 մեծնոց, մի ուրիշը հաշուում է 200, 300 և մինչև անգամ հազար հինգ հարիւր: Ընդհանուր արձանագրված տեղեկութիւններ բացակայ են:

Քիրմանշահում, ուր սկզբում երևացել էր խօսքայի, ազգաբնակչութիւնը չէր ցանկացաւ լսել բժիշկների խորհուրդները և նոյն իսկ այնպիսի յուզմունք առաջացրեց, որ եւրօպական բժիշկները ստիպված եղան հեռանալ այնտեղից: Տգէտ ժողովուրդը, համարելով խօսքայի իբրև մի պատիժ, անպատեհ համարեց ամեն մի միջամտութիւն, ամանաւանդ եւրօպացիների կողմից:

Թէ քիրմանշահում և թէ Թէհրանում ժողովրդական նախապաշարմունքները ասպարէզ եկան խանգարելու այն նպատակաւոր և խելացի խորհուրդները, որ տալիս էին բժիշկները: Ազգաբնակչութիւնը թագնուում էր հիւանդներին և մեռածներին, որպէս զի նրանք ոչ մի հրակոչութեան չենթարկվել թէ իրանց իշխանութեան և թէ բժշկական մարմնի կողմից:

Մեր երկրի վրայ ինչ աւելի լուսաւոր է, քան մեր հարևան Պարսկաստանը, բայց և մեզանում, մեր գիւղական խորքերում, դեռ շատ մեծ է սոփոթութիւնը և նա կարող է փառանք բերել ժողովրդին, եթէ զօգաբար խօսքայի մուտք գործէ մեր երկրի:

Մենք ցատում ենք և վրդովւում ենք, որ մեր ժողովուրդը չէր գիտէր գնահատել առողջապահական բարեկարգութիւնները, որ նա թոյլ է տալիս մի շարք զանազանութիւններ իր կենցաղապարտութեան մէջ և այդպիսով պատրաստ հող է ներկայացնում զանազան հիւանդութիւնների զարգացման համար: Մակայն ինչու ենք մենք զարմանում, որ իրականութիւնը այդպէս է: Որքան ենք մենք աշխատել նախապաշարմունքների դէմ լուրջ և խելացի կերպով կռուելու: Արդեօք մենք մեր խօսքով ու խորհրդով, մեր գրքով ու թերթիկներով թափանցել ենք ժողովրդական խորքերը և ընդարձակել ենք ժողովրդի մտաւոր զարգացումը և աշխարհայեացքը:

Մենք այն մոլորութեան մէջ ենք, թէ չը սերմանած կարելի է հսկել, թէ ոչինչ չը տուած ժողովրդին, կարելի է նրանից պահանջել գիտակցական վերաբերմունք դէպի իր շրջապատող երկրորդները և սպասել նրանից համապատասխան գործեր: Երբ մի ժողովուրդ չը գիտէր ընտելութեան մէջ գործող օրէնքները և արամադիր է ամեն մի երեւոյթի բացատրութեան համար նախապաշարմունքների հեղինակութեանը դիմել, նա այն ժամանակ մի շարք գոհեր կը տայ, վտանգի ենթարկելով մարդկանց և նրանց բարօրութիւնը:

Մօլթայի նման հիւանդութիւնների սպառնացող ուրուականը բարձիւ մի աւելորդ անգամ պէտք է յիշեցնէ մեզ այն մեծ պարտաւորութեան մասին, որ

ունի մեր ինտելիգենտ դասակարգը դէպի ժողովուրդը՝ մտցնել գիտութեան լոյսը ժողովրդի խաւերի մէջ ամենալայն ծաւալով:

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մ Ա Մ Ո Ւ Լ

Հայ և թուրք ինտելիգենտների կամ մտաւորականների յարաբերութեան խնդիրը վաղուց արծարված և շօշափված է «Մշակի» մէջ: Դեռ նորերս մայիս ամսին «Մշակի» մէջ տպվեց դարձեալ մեր մի աշխատակցի յօդուածը, նուիրված այդ խնդրին: Անկախ դրանից, Բագուի երկու ուսուցիչներն ևս նորերս ունեցան մի բանակիւ այդ հարցի մասին: Այս տարի, գարնան, «Բագուի» լրագրի մէջ պ. Տէր-Դանիէլեան տպեց մի յօդուած, որի մէջ այն միտքն էր ապացուցանում, թէ թուրքաց հայերը մեծ դեր են խաղացել թուրքաց գրականութեան զարգացման գործի մէջ: Մակայն հէնց նոյն լրագրի մէջ մի պարոն, Հուսէյն-զադէն անունով, շտապեց հերքել այդ միտքը, յայտնելով, որ հայերի, ինչպէս և առնաւորաբար թուրքերին գրող քրիստոնեաների թուրքաց գրականութեան մատուցած ամբողջ ծառայութիւնը կայանում է նրանում, որ նրանք թարգմանել և հրատարակել են բուլղարային կեղտոտ կամ պոռնիկագրական բանասեր ֆրանսերէնից: Պ. Տէր-Դանիէլեանի միտքը կամեցել է հերքել և Բագուի միւս ուսուցիչ «Բակ. Իշվէտի» լրագրի, հիմնով իր հերքումը «Մշակի» մէջ տպված յօդուածի վրա («Մշակ» № 97), սակայն, ասում է խմբագրութիւնը (տես № 151), այդ հերքումը չը տպվեց խմբագրութիւնից անկախ պատճառներով:

Պատասխանելով պ. Հուսէյն-զադէին, պ. Տէր-Դանիէլեանը տպեց «Բագուի» լրագրի № 145-ի մէջ մի նոր յօդուած, որտեղ տրեւում է ապացուցանել, որ եթէ թարգմանական գրականութիւնը թուրքացում չը գիտէր Չօլայի, Դիլիլեանի պէս անուններ, այլ զարգարվում է ֆրանսիական խոհանոցի պոռնիկագրական և թեթիւ կամ կեղտոտ արտադրութիւններով, այդ բանի մէջ միջաւոր են ոչ թէ թարգմանիչները, այլ թուրքական ցենզուրան, որ ուղղում է գրականութիւնը այդպիսի շաղկապի: Իր ասածը ապացուցանելու համար պ. Տէր-Դանիէլեան հիմնվում է «Մշակի» մէջ երևցած պ. Տիգրան Չաւէնի և վերոյիշեալ № 97-ի մէջ տպված յօդուածի վրա, և չը գիտենք ինչու հարկաւոր էր համարել յայտնել, որ այդ յօդուածը, այն է «Մշակի» № 97-ի մէջ տպվածը պատկանում է «Բագուի» հրատարակչի և թուրքական խորագրեալ ճանաչող թուրքահայի գրչին:

Մեր ընթերցողները ծանօթ են, թէ պ. Տ. Չաւէնի և թէ վերոյիշեալ յօդուածի բովանդակութեան հետ և մենք կրկինը աւելորդ ենք համարում: Բայց «Բակ. Իշվ.» լրագրի թիւ 151-ում հարկաւոր է համարել մի հերքում տպել, հաստատելու համար պ. Հուսէյն-զադէի կարծիքը, թէ թուրքահայերը ոչ մի լուրջ դեր չեն խաղացել թուրքաց գրականութեան մէջ և ոչ մի լուրջ ծառայութիւն չեն մատուցել նրա զարգացման: Եւ պ. Տէր-Դանիէլեանի ասածները հերքելու ու պ. Հուսէյն-զադէի հերքումը ապացուցանելու համար սա հիմնվում է պ. Չաւէնի և ***-ով ստորագրվող յօդուածների վրա: Այդ անթիւով «Բակ. Իշվ.» լրագրի թիւ վրդովմունք է յայտնում—և մենք շատ իրաւացի ենք գտնում այդ վրդովմունքը—որ պ. Տէր-Դանիէլեանը բաց է անում օտարների ծածկանունը, երբ հեղինակը նրան բաց չէ արել:

Գալով խնդրի էութեան, արդեօք թուրքայի հայ ինտելիգենտն խաղացել է որ և է լուրջ դեր թուրքաց գրականութեան մէջ, մենք բոլորովին համաձայն ենք «Մշակի» յօդուածագրի կարծիքին, որ հայը, իբրև մտաւորական մարդ, միշտ ըմբ

ոստ է եղել թուրքի առաջ խոհարհելու պարտականութեան դէմ: Ուրիշ ասպարէզներում—քաղաքական, ֆինանսական, արհեստական, նա խոհարհել է թուրքի առաջ, բայց մտաւոր աշխարհում նա միշտ պահպանել է իր անկախութիւնը: Իսկապէս խաղաղութիւնը մեծ, համակրած թուրքն ու պարսիկը երբէք չեն կարող ու տրամադրութիւն, ցանկութիւն ցոյց չեն տալիս ըմբռնել արեւմտեան քաղաքակրթութեան մտքերը, աշխարհայեացքը, փիլիսոփայութիւնը, ուստի հայ ինտելիգենտն անօգուտ համարեց գործել մի ասպարէզում, որի վրա իր ցանած սերները պէտք է խեղդէին անհամար որոնքներից:

Թուրքական անցիւղը ոչ մի հնարաւորութիւն չէ ներկայացնում փոքր ի շատեւազատ, անկախ մտաւոր գործունէութեան համար: Եւ եթէ հայերը որ և է լուրջ դեր չեն խաղացել թուրքական գրականութեան մէջ, դրա պատճառը ոչ թէ նրանց անկարողութիւնն է եղել, ինչպէս կարծում է պ. Հուսէյն-զադէն, այլ նրանց ցանկութիւնը՝ պահպանել իրանց մտաւոր անկախութիւնը և մտաւոր ասպարէզում ևս չը ստրկանալ թուրքայի առաջ:

Մեր պատասխանը «Շարք-Ռուս» թուրք թերթին Սաբաղարի դէպքի առիթով ֆրանսիական պատասխան մինչև այժմ: Բայց «Շարք-Ռուս»-ի փոխարէն հարկաւոր է համարել պատասխանել Բագուի «Բագուի» լրագրի, թէն ոչ ուղղակի: Կարգիւր ասում է, թէ «մամուլի» մի քանի օրգաններում լուրեր երևացին մի ինչ որ ֆանատիստական շարժման մասին, ուղղված քրիստոնեաների դէմ Պարսկաստանում: Կարգիւր յայտնում է, որ ինքն հէնց սկզբում կասկածով վերաբերվեց այդ լուրերին և ճշգրիտ տեղեկութիւններ հաւաքելով, իմացաւ, որ այդ լուրը հնարված է և ոչ մի մուշտեղ ոչ մի «ֆիւմա» չէ հրատարակել քրիստոնեաների դէմ: Ապա լրագրիւրը պատասխանում է, որ այդպիսի ֆեմիա հրատարակել անկարելի էր, որովհետեւ նա կը հակասէր Ղուրանի և շարիաթի տրամադրութիւններին, որ «խորագրեալ համակրած է մարդասիրութեան ոգով»:

Թէ և մեր թղթակցներին հաղորդած Սաբաղարի և Շահրուքի չափի Միջազգային Մամուլանցի աղա մուշտեղի հրատարակած ֆեմիայի մասին շատ դրական էր և բացօթյա, բայց կարող ենք հաւատացնել «Բագուի» լրագրին, որ մենք առաջինը և ամենից շատ ուրախ կը լինենք, եթէ այդ լուրը սխալ լինի: Ուրախ կը լինենք անկեղծօրէն այն պատճառով, որ մենք բոլոր սրտով ցանկանում ենք տեսնել մեր հարևան Պարսկաստանը և պարսիկ ժողովուրդը օր առաջ ոտք կոխած իսկական քաղաքակրթութեան շաղկի վրա, իսկ իսկական քաղաքակրթութիւնը հետո է հակամարդկային որ և է ձգտումներից:

ԿԻՐՈՐԻ ՄԻՋԱԶԳՈՅԻՆ ԿՈՆԳՐԵՍՍ ԿՐՈՆՆԵՐԻ ԸՆԴԴԱՆՈՒՐ ՊԱՏՄՈՒԹԵԱՆ

Շվեյցարիայի Բազել քաղաքի մեջ ուղարկված մի պաշտօնական ցայտարարութիւնից երևում է, որ այս տարի օգոստոսի 17—20-ին կայանալու է այդ քաղաքում կրօնների ընդհանուր պատմութեան երկրորդ միջազգային կոնգրէսը (Congrès International de l'histoire des Religions), բաղկացած հետեւեալ սեկցիաների. 1) Այսպէս կոչված «Բնական» ազգերի կրօնները, 2) Չինացիների և եսպոնացիների կրօնները, 3) Եգիպտացիների կրօնը, 4) Սեմիտականների կրօնները, 5) Հնդկաստանի և Իրանի կրօնները, 6) Յոնիների և հռոմէացիների կրօնները, 7) Գերմանների, կելտերի, սլաւոնների և ունգարների կրօնները և 8) Բրիտանական կրօնը:

Կոնգրէսը, չունենալով ամենևին զօգուտիական (պատանաբանական) բնաւորութիւն, թոյլ չէ տալու դաւանաբանական որ և է հարցի բնուութիւն կամ վիճարկութիւն, այլ

զբաղվելու է միայն զուտ պատմական հետազոտութիւններով: Կոնգրէսի պէտք է մասնակցեն պաշտօնական ներկայացուցիչներ, քրիստոնեական զանազան երկրների և եկեղեցիների պատգամաւորներ, ինչպէս և բազմաթիւ գիտնականներ ու պրօֆէսորներ, որոնց մէջ Ա. Բէյլի, պրօֆ. Է. Նալիլ, յայտնի արեւելագէտ Կլ. Հուար, Թէօֆոր Բէյ-նախ, իշխան Բօլէն Բօնապարտ և այլն: Ներկայացուցիչներ լինելու են և Ռուսաստանից:

Կոնգրէսի հրատարակած օրակարգի կամ պարագմունքի առաւելների ցուցակից երևում է, որ պէտք է կարգադրեն բազմաթիւ հետաքրքիր գեղեցուկներ և ընթերցանել կոնգրէսի ընդհանուր ժողովներում և սեկցիաներում. այդ գեղեցուկներից մի քանիսը առաջ ենք բերում. 1) պրօֆ. Հերման Ուլշէյեր—Կրօն և Բարոյակաւորութիւն, 2) Թէօֆոր Բէյ-նախ—Հնգամեանի վերջնական խմբագրութեան բնականը, 3) Կլ. Հուար—Մուսուլման րացիոնալիզմը X դարում, 4) Դօկտոր Բանցէի—Յուդայականութեան դրութիւնը մարդկութեան զարգացման պատմութեան մէջ—5) Համբարձում Առաքելան—Հայերի նախնի կրօնը, 6) պրօֆ. Սարի—Աբբաթի յարաբերութիւններ գերմանի, հնգ, 7) Հ. Ասաբեկան—Հայաստանից եկեղեցու պատմութիւնը, 8) Դօկտոր Լինի—Իսրայէլը ընդդէմ Յուդայի քրիստոնեականութեան մէջ:

Կոնգրէսի կարգադրել մասնաժողովի նախագահն է պրօֆէսոր Նալիլ: Զեկուցումներ ներկայացնելու և այլ տեղեկութիւններ ստանալու համար պէտք է դիմել այս հասցեով. II Internationaler Religions geschichtlicher Kongress, in Basel.

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Կաւկազ» պաշտօնական լրագրին հեռագրում են Պետերբուրգից, որ ներկայ յուլիսի 12-ին Պետերբուրգում Կոլկասի իշխան կառավարչապետ գեներալ-ադիւտանտ Գ. Ս. Դօլիցկինը քաղաքաւորութիւն ունեցաւ ներկայանալու Նոյն Կայսերական Մեծութիւններ Թագաւոր Կայսրին և Թագուհի Կայսրուհի Ալեքսանդրա Գեորգիւնային:

Թիֆլիսի պ. Նահանգապետ գտնելով, որ շատ յարմար է կայսերական տոներին հրավարութիւնները կատարել Երևանի հրավարակի վրա, որը թէ ընդարձակ է տարածութեան կողմից և թէ չէ խանգարում կառուցելու և ձիաբարձերի երթեկութեանը, խորհուրդ է տալիս այսուհետեւ այդպիսի հրավարութիւնները կատարել վերոյիշեալ հրավարակի վրա:

«Կաւկազ» պաշտօնական լրագրին հաղորդում են Իդրէից. «Յուլիսի 10-ին, գերբազմաթիւ 2-ին բազարի հրապարակի վրա գնդակահար արին Սուլթանի գաւառի գաւառապետ փոխ-գնդապետ Ալեքսանդր Անտօնովիչ Բօգաւոյսկուն: Սպանող յայտնի չէ: Երևանի նահանգապետ կոմս Տիգրանուհէն ժամանեց Իդրէ, սպանութեան վայրը: Սպանողին որոնելու համար տեղական իշխանութիւնը եռանդուն միջոցներ է ձեռնարկում:

Մենք ստացանք Պետերբուրգից պ. Գ. Վերմիլանի մի նոր ուսումնական աշխատութիւն «Материалы для истории грузино-армянских отношений». Ответъ на книжку кн. И. Т. Чавчавадзе: Армянские ученые и «вопросы камены». (Ներքին վրացահայկական յարաբերութիւնների պատմութեան համար. պատասխան իշխան Ի. Չավչավաձէի և «Հայ գիտնականներ և «աղապարի ֆաբրի» գրքի) վերնագրով: Գրքը տպագրված է մարտի, ընտրել թղթի վրա և արժէ 1 ռուբլի: Նրա մասին մենք առանձին կը խօսենք:

Անցաւ օր Թիֆլիսում վրաց Բազմէթի եկեղեցում, մի խումբ ուսանողներին նախա-

ձեռնութեամբ հոգեհանգիստ կատարվեց նոր-
րերս մեռած հոգեհանգիստ ուսուցիչ Զեմալի
համար. ներկայ էին մասնաւոր, բարձրագոյն
ինքնավարութեան ներկայացուցիչներ և շատ
ուրիշ կրթված անձեր:

Կարմիր խաչի կողմակցներ ընդհանուր վար-
չութիւնը խնդրում է մեզ տպագրել՝ հետեւեալ
հաշիւը. «Ռուսական Կարմիր խաչի Ընկերու-
թեան Կովկասեան վարչութեան գրասենական
գումարները վերաբնակող երեսը, որ 1904
թ. յունվարի 1-ին 218,071 ր. 12 կ. կար
1904 թ. յունվարի 1-ին 218,071 ր. 12 կ. կար
86,673 ր. 99 կ. և 1904 թ. յունվարի 1-ին կար
264,930 ր. 98 կ. գումար, որը բաղկացած էր
212,600 ր. տոկոսաբեր թղթերից, ընթացիկ
հաշիւով՝ 51786 ր. 77 կ., Պետական բանկի
խնայողական արկիւմտ 149 ր. 21 կ. և դրա-
մարկիւմտ առձեռն գումար՝ 395 ր.:

Ներքին գործերի մինիստրութեան կողմից
արդէն մշակված է դեղատոմսերի համար նոր
օրէնքների նախագիծ, որը նախ քան օրէնս-
դրական ձեռնարկով հաստատվելը, ուղարկ-
վում է բոլոր նահանգապետներին և զանա-
զան հիմնարկութիւններին, նրանց կարծիք-
ները յսուկ համար: Ներկայումս Թիֆլիսի պ.
նահանգապետը ստացել է այդ նախագիծը:
Որովհետեւ նա շուտօրում է և տեղական ազ-
գայնականութեան շահերը, որին հակելու համար
կոչված է քաղաքային վարչութիւնը, ուստի
պ. նահանգապետը, ուղարկելով մի օրինակ
ստացված նախագիծը, խնդրում է ներկայաց-
նել դուռնային քննութեան համար և հետեւեալ
մասին շուտով տեղեկացնել իրան:

Կուր դետի ափերը քաղաքի սահմանում և
նոյնպէս քաղաքի ձորակները մարքեւու հա-
մար նախահաշիւ է ներկայացրել քաղաքա-
յին առողջապահական յանձնաժողովին 3140
բուրլու: Դրա համար պահանջվում է 2000-ից
աւելի մշակ:

«Топр. Пр. раз.» լրագիրը հաղորդում է, որ
Միքէլի երկու հուշու պաշտպանութեան գործը
զբաղված է ամբողջ տեղական ազգայնականութեան
վրա: Ազգայնականութիւնը պարտաւորվում է իր
միջից նշանակել պահապաններ և վերահսկո-
ղութիւններ երկաթուղու գծի այն մասերի
վրա, որոնք գտնվում են չնախկին սահմանի
վրա և որոնք կարող են վտանգել երկաթուղի
մուծ մարդկանց կողմից:

Անցեալ օրը, յունվարի 12-ին, Թիֆլիսի Մի-
քայելեան փողոցի № 207 տունը խուլարկելով
ոստիկանութիւնը և դատաստանական իշխա-
նութիւնը գտան բաւական քանակութեամբ
կեղծ ոսկէ ու արծաթէ դրամներ—5 և 1 րուբ-
լանոցներ և 25, 20 կոպէկանոցներ: Տան եր-
րորդ յարկում գտնվեց և այդ կեղծ դրամները
կարելու ձեռքի գործիչները: Չարագործերի
անուններ են—Ստեփան Վարդով և Գալիլ
Չուրով: Դրանք արդէն անգործելով իրանց
կեղծ դրամները, ծախսում էին և մեծ մասը
խաղական դրամի վեր ածում գլխաւորապէս
Հաւաքարում: Գաղտնիքը ոստիկանութեանը
յայտնել է Ստեփան Վարդովը:

Թիֆլիսի նահանգապետը հաստատել է
ձեռքարշի անօնիւ ընկերութեան մի նոր յա-
տակագիծը, որի համաձայն Գործիչների պրոս-
պեկտի գիծը իշխելու է Նիկոլայեւի փողոցի
փողոցով և անցնելով Լօրիս-Միլիքեան և
Շուաքի փողոցներով կրկին դուրս է գալու
Երևանեան հրապարակ: Այդ նոր յատակա-
գիծը կազմված է նրա համար, որ Դվորցո-
վան նիւ փողոցը անյարմար է դառնում և
էքստրակտ քարէ կի կրկնակի գծերի համար:

«Нов. Вр.» լրագիրը հաղորդում է մի շատ
ուրախաբեր լուր: Ժողովրդական լուսաւո-
րութեան մինիստրութիւնը ներկայումս զբաղ-
ված է ընդհանուր պարտաւոր կրթութիւն
մտցնելու հարցով: Այդ նպատակով ժողովրդա-
կան դպրոցների բոլոր վարչութիւններին ա-
ռաջարկված են հարցեր ուսման կարգը ունե-
ցող երեխաների թիւ և ընդհանուր պարտա-
գիր ուսման ներմուծութեան համար անոթ-
ժելո դպրոցների թիւ մասին: Ժողովրդական
դպրոցների վարչութեան հաւաքած տեղեկու-
թիւնները համեմատ միմիայն Պետերբուրգի
քաղաքի և նրա շրջանում 9 տարեկան հասակի
14,000 երեխաներ կան, որ դուրի են կրթու-
թիւնից: Ներկայումս ժողովրդական կրթու-
թեան համար Պետերբուրգի նահանգ ծախսում
է 2½ միլիոն բուրլի տարեկան, որից 500,000

բուրլին մատակարարում են զեմստովնները,
վօյստները վարչութիւնը, զանազան ուրիշ
հասարակական և մասնաւոր հիմնարկութիւն-
ները:

Առաջին ԱՅԻՑ մեզ գրում են. «Այս տարի,
ինչպէս տեղեկանում ենք, Արաւոստան ա-
մարանոցում ահա յուլիսի կէսն է և դեռ մին-
չե այժմ քիչ եկուրներ կան: Դեռ շատ տներ
դատարկ են մնացել և չեն վարձված: Իսկ
անցեալ տարի այս ժամանակը համարեա ըս-
տին էլ վարձված էին: Ինչպէս երևում է
գլխաւոր պատճառը եղանակների մեղմութիւնն
է և մասամբ էլ պատերազմը»:

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՊԱՏԵՐԱՋԱՄԻ ԾՈՒՐՁԸ

Վլադիմիր Սոսիի դրութեան մասին: Վլադիմիր
Սոսիի հեռագրում են, որ այդ շրջանում ամեն
բան հանգիստ է: Եղանակը հիմնաւոր է: Բեր-
դի հրամանատարը միջոցներ ձեռք առած լի-
նելով նուազեցնել կանանց և երեխաների
թիւը, վերջին ժամանակները աւելի քան 4000
կանայք և երեխաներ դուրս գնացին բերդից:
Առհասարակ բերդը գեղեցիկ կերպով պա-
րտաւորված է ամեն մի դիպագծի դէմ. ուսես-
տի և ուղիական միջերկր պաշարները ահա-
գին են: Ամենքը անհամբեր սպասում են եւ-
պոնացիների գալու: Յունիսի 7-ին այդտեղ
անհասկանալիութիւն գործեց ոմն Ֆրեդրիկ ձեկ,
72 տարեկան ծերունի: Նա քաջ գիտակ էր
այդտեղի ծովերի և այդտեղի խուճուղների
պատուհանն էր. շատ անգամ նա լուրջ ծա-
ռայութիւններ է մատուցել ծովային վարչու-
թեան տեղական կենտրոնի մասին ունեցած իր
հաւաքի տեղեկութիւններով: (H. Bp.)

Ռուսական կառավար. կրեյսերների խնդիր:
Ռուսաց Կամաւոր նաւատորմի կամաւոր կրեյ-
սերների Կարմիր Ծովի վրա ունեցած գոր-
ծողութիւնների մասին «Standard» լրագիրը
հետեւեալ նկատուիւններ է յայտնում. «մեր կար-
ծերով, Կամաւոր նաւատորմի կրեյսերները,
որոնք կանգնեցնում են անգլիական և գեր-
մանական շոգեհանգր, ամենալաւ դէպքում
այնպիսի դրութիւն են ձեռք բերում, ինչպէս
«Ալմաբան» ամբրիկական ներքին պատերազ-
մի ժամանակ: «Ալմաբան» հրամանատար կա-
պիտան Սեմը ոչ ծովահէն էր, ոչ կապիտան
(կազմակերպված ծովահէն): «Ալմաբան» իրա-
ւագիտապէս դաշնակցականների պատերազ-
մական նաւն էր: Ռուս կամաւորները դուրս
են եկել Սև ծովից և անցել են Գաղաւթի
նեղուցը իբրեւ առեւտրական նաւեր, և միայն,
նեղուցը անցնելուց յետոյ, նրանք յայտարա-
րել են իրանց պատերազմական կրեյսերը: Ան-
կասկած, նրանք խախտել են Թիւրքիայի չե-
զոքութիւնը և նշանակութիւն չունի թէ այդ
կատարվել է սուլթանի յօժարութեամբ կամ
առանց նրա յօժարութեան: Ռուսաց կրեյսեր-
ներ խաղացին եթէ ոչ սուլթանի, գոնէ միւս
պետութիւնների հետ այն, ինչ որ մասնաւոր
կենտրոն մէջ կոչվում է «կատակ» կամ «շտուկ»,
և չէ կապիտան առաջուց ասել թէ մինչև որտեղ
կը հասնէ. ուստի, կանգնելով մի անգամ
այդպիսի հող վրա: Կամաւոր նաւատորմը
հանդիսացաւ երկայնի ոյժ, որ լուրջ ուղղ-
ութիւն է պահանջում: Տեսականապէս, նրա
նաւերը մասնաւոր սեփականութիւն են և սահ-
մանված են առև որի և պետի փոխադրու-
թեան համար, իսկ պատերազմի ժամանակ
նրանք դառնում են պատերազմական կրեյ-
սերներ: Դրանում, ի հարկէ, ոչ մի հակառու-
թիւն չը կայ ուրիշ պետութիւնների պրակ-
տիկայի հետ և ամենից քիչ անգլիական պե-
տութեան պրակտիկայի հետ, որովհետեւ մեր
նպատաւարվող զոգեհանգիւն ընկերութիւն-
ները մի և նոյն դրութեան մէջ են գտնվում,
ինչ որ ուսաց Կամաւոր նաւատորմը: Բայց
երբ սկսվեցին պատերազմի կան գործողու-
թիւնները, Ռուսաստանը պարտաւոր էր յայ-
տարարել, մտադիր է արդեօք ու օգտվել այդ
նաւերով, իբրեւ պատերազմական կրեյսերնե-
րով: Ռուսները իրաւունք չունեն—շարունա-
կում է լրագիրը—իրանց կամաւոր նաւերով
մտնել չէզոք նաւահանգիստները և ծով վերց-
նելու, առեւտրական դրօշակի տակ, իսկ յետոյ
դուրս գալ քաջ ծովը և բարձրացնել պատե-
րազմական դրօշակ: Գործողութեան այդպիսի
եղանակը խախտում է այն բանի, որ կոչ-
վում է միջազգային քաղաքավարութիւն և
եթէ Ռուսաստանը դրական յայտարարութիւն
չանէ, որ իր կամաւորները նա վերածել է
պատերազմական կրեյսերների, այն ժամ հնակ
բրիտանական կառավարութիւնը իրաւունք

կունենայ բողոքել և մերժել ձեռնաչել նրանց
համար պատերազմական նաւերի իրաւունք:
Բացի դրանից և իրանք օֆիցերները, որոնք կա-
ռավարում են այդ ուս կամաւորները գտնվում
են նոյնպիսի անորոշ իրաւագիտական դրու-
թեան մէջ, ինչպէս և իրանց նաւերը: (H. Bp.)

Բալթիկական հալադայի պատերազմը: «Echo de
Paris» լրագիրը Պետերբուրգի թղթակցից խո-
սակցութիւն է ունեցել Պրանսիայի ծովապետ
Ժերմէի հետ, որը հետեւեալն է ասել բալթի-
քական էսկադրայի առաջիկայ պաշտօնի մա-
սին. «Ես չը գիտեմ, թէ ինչ նաւեր են մտնում
նրա կազմութեան մէջ, ես գիտեմ միայն, որ
այդ էսկադրան պէտք է գործի և հօգը լինի:
Ես գիտեմ նոյնպէս Բալթիկ մանէօվրներից,
որոնք կայացան Վիլհելմ կայսրի ներկայու-
թեամբ 1900-ին, որ նրա հրամանատար ծո-
վապետ Ռօժեստովսկին—աչքի ընկնող ձիւ-
քերի տէր մարդ է: Որպիսի դժուար և վտան-
գաւոր, բայց մի և նոյն ժամանակ փառաւոր
պաշտօն է վիճակվել նրան—տանել կուր այն
էսկադրան, որ գումարվում է այժմ Պետեր-
բուրգում, Կրօնշտադում և Լիբավում: Հեռա-
ւոր Արևելքի ջրերը:» Այն հարցմունքին «Իսկ
եթէ ուսումնարան միջև այդ ժամանակ կորցնեն
Պորա-Արտուրը», ծովապետ Ժերմէն պատաս-
խանք—«Այնպիսի փալլուն ծովագնացի և
նաւապետի համար, ինչպէս ծովապետ Ռօ-
ժեստովսկին է, այդ դէպքում ևս խնդիրը նրա
ոյժերից բարձր չի լինի: Այդ խնդիրը լուծե-
լու համար պէտք է, իհարկէ, մեծ հմտութիւն
ունենայ, բայց այն նաւերն և այն գերագնաց
օֆիցերներն հետ, որ ունի Ռուսաստանը, նա
կը լուծվի: Այո, դա—համարձակ բայց է, բայց
նա կը պահվի աշողութեամբ և ինձ հետ
միասին ամբողջ Ֆրանսիական նաւատորմը
կատարեալ աշողութիւն է ցանկանում մեր
փառաւոր բարեկամներին—ուս ծովագնացնե-
րին: Ռուսաստանը այնպիսի հօգը միջոցներ
ունի, մարդկանց այդպիսի քանակութիւն, այն-
պիսի եռանդ, որ նրա վերջնական յաղթու-
թեան մասին կասկածիլ խելքի հակառակ կը
լինէր: Իմ համոզմունքով, Ռուսաստանը ան-
պատճառ, կը յաղթէ: (Pyc. Вѣд.)

ԹԻՐԻՔԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԾՈՒՐՁԸ

«Нов. Обозр.» լրագրում պ. խանգաղէն
գրում է. «Աշողութեամբ չը պահվեցին թէ Կ.
Պօլսի հայոց պատրիարքի և թէ ազգեցիկ հայ
էֆէնդիների յաճախակի փորձերը՝ բանակցու-
թիւններ վարել խաղաղութեան մասին ապրա-
տաւորելի հետ:

Ամեն անգամ նրանք, որպէս հաղորդում են
արտասահմանեան լրագիրներից մի քանիսը,
խուսափող պատարիսան էին ստանում. «մեր
խմբի բոլոր անդամները հաւաքված չեն, մենք
չենք կարող ոչինչ որոշ բան ասել առանց
ամբողջ կազմի վճռի: Իր վերջին դիմումի
մէջ պատրիարքը աւելի համոզեցուցիլ փա-
տեր բերեց, շնորհով, ի միջև այլոց, այն
կայսրութեան սահմաններում, միայն թէ
նրանք զլիք հանեն իրանց քաղաքական գա-
ղափարները և թորին իրանց յանցաւոր գոր-
ծունէութիւնը: Սակայն այդ դիմումն ևս ան-
հետեւեալ մնաց:

Դրանից յետոյ Թիւրքաց իշխանութիւնները
դիմեցին մի շարք զինուորական գործողու-
թիւնների: Ստանուր շրջապատից զօրքերի
և զինուորական զինուորների նշանաւոր բանակու-
թեամբ, և մինչև 20 բրիտանական զիւղեր
չնչվեցին: Կատաղութիւնը և ատելութիւնը
բերդերի և հայերի միջև ծայրայեղ աստիճա-
նի հասան, որի ամենալաւ ապացոյցը կարող
է ծառայել հետեւեալ հանգամանքը: Երբ Բիթ-
լիսի վալին եկա Մուշ, տեղական մահմեդա-
կանները իրանց չէլեբիով և իմամներով եկան
նրա մօտ և սկսեցին կարական կերպով թոյլ-
առութիւն պահանջել՝ ընալին՝ անելու հայե-
րին Թիւրքիայի սահմաններում և զբաղելու առ
միշտ վերջ գնելու ամեն տեսակ հարցերին և
բարեկամութիւններին: Լաւ է, որ գործին մի-
ջամեցին եւրօպական պետութիւնների ներ-
կայացուցիչները և յետ պահեցին Թիւրքաց
իշխանութիւններին մի այդպիսի վտանգաւոր
բայ անելուց: Եթէ այդ չը լինէր, տեղի կու-
նենար մինչև անգամ Թիւրքիայի տարեգրու-
թիւնների մէջ չեղած արեւմտեան մի դրամա-
նաւոր միջոցներ ձեռք առնել, եւրօպական հիւ-
նարկայ քաղաքում գործերը լուրջ ընթացք
ստանալով, շատ բարեբաղնում են Թիւրքիայի
բանը: Նա, մի կողմից, պարտաւոր է եղան-
գուն միջոցներ ձեռք առնել, եւրօպական հիւ-
նարկայի ստիպողական պահանջներին հա-

մաձայն, որպէս զի չափաւորէ բերդերի վա-
րենի կրքերը և զբաղել զազարեցնէ արշա-
ւանքը բրիտանականների դէմ, միւս կողմից—
լուրջ ուղարկութիւն դարձնել տայ ապստամբ-
ների գործունէութեան վրա, որոնց շարքերը
գնալով աւելի և աւելի ստուարանում են:
Արդեօք Թիւրքիան գլուխ կը հանէ այդ բանից
—հա հարց, որը հետաքրքրում է շատերին:
Պէտք է ենթադրել, որ մեզ մօտ մեր աչքի
առաջին կատարված փաստերին նայելով, նա
չէ կարող ինքնօրոյն կերպով իրագործել այդ
չափազանց դժուար միստիան և հրդեհը կամաց
կամաց կը տարածվի և ուրիշ շրջաններում:
Մենք այդ ուղղութեամբ նշաններ արդէն տես-
նում ենք: Արտասահմանեան մամուլի մէջ
սխտեմատիկ կերպով տեղեկութիւններ են
երևում, որ ապստամբները օժանդակ ոյժեր
են ստանում, որ նոր զօրաբաժնիներ են երե-
ւում վանի և էրզրումի մօտ: Արդէն յաժառ
լուրեր են պատում, որ վանից ոչ հեռու ա-
ւերմունքի ենթարկվեցին բրիտանական Գալլա
գիւղը և եկեղեցին իմ կղզու վրա: Այդ բո-
լորը, ի հարկէ, ուժեղացնում է մեր յայտնած
ենթադրութիւնը: Սկզբում, որպէս յայտնի է,
հայ ապստամբները զետեղվեցին երեք կէտե-
րում. Շէնիկ, Տարեկ և Իշխանաձոր գիւղե-
րում, կենտրոնական տեղ ունենալով Գէլին
գիւղը: Այժմ, նորագոյն տեղեկութիւնների
համեմատ, այդ բոլոր գիւղերը բնակչիւն են
արված քերդերից և Դիարբէքից կանչված
զօրքի բանակաւորներ են ծառայում: Գործերի
այդպիսի դրութեան ժամանակ Անգլանիկը
իր զօրաբաժնով և ընկերներով բարձրացաւ
Անտոք լեռան գագաթը, ուր, չը նայելով
ցրտին և ուստետի պաշարների պակասու-
թեան, պատրաստվում են նոր ընդհարումներ
համար: Այդպիսով, կասկածի ստուեր անգամ
չէ մնում, որ գործերի խաղաղ կանոնաւորումը
իր միջոցներով, ինչին որ ձգտում էին Թիւր-
քաց իշխանութիւնները, անհաւան է դառ-
նում: Մեծ յոյսեր են դրվում եւրօպական պե-
տութիւնների ներկայացուցիչների վրա, որոնք
գիւս ևս իրանց հիւպատոսները միջոցով ու-
սումնաւորում են Բիթլիսի բրիտանականների
դրութիւնը և այն պատճառները, որ առա-
ջացրել են շարժումը հայերի մէջ:

ՏԵՂԵԿԱԿԱՆ ԳՈՐԾԵՐԻ ԾՈՒՐՁԸ

Թէհրանում աւերումներ գործող խօլբայի
մասին «Закан. Обоз.» լրագրի մէջ պ. Իւրի
Կավկասիէին հետեւեալ տեղեկութիւններն է հա-
ղորդում. «Պօլսիայի սպանական ծաւալը ան-
ցաւ. մահացութիւնը, որ օրական հասնում էր
1500 մարդ, իշաւ 300-ի. սարսափը տիրեց
միայն ընկերների վրա, որոնք գրեթէ ամբող-
ջովին փախան շրջակայները: Եւրօպացիների
մէջ սարսափ չէր նկատվում. չը նայելով վը-
տանգին, ուսաց բանիկ և մի քանի ուրիշ
եւրօպական հաստատութիւններ շարունակե-
ցին գործել: Կենսական միջերկրի գիւղերից
երեւելու զաղարման պատճառով, նրանց գնբը
չափազանց բարձրացան թէհրանում. այդ պատ-
ճառով, անցեալի օրինակի նման, ժողովրդա-
կան խողովութիւններ էին սպասվում, բայց
չնորհիւ այն հանգամանքի, որ ուսաց ֆի-
նանսների մինիստրութեան գործակալ Գրոբէն
իր ժամանակին միջոցներ ձեռք առաւ և ուս-
սաց դեսպանատան կառավարիչը միջամեց,
ժողովրդական խողովութիւնների առաջն առն-
վեց. միջերկրից է ժամացան և վտանգը ան-
ցաւ: Ժողովրդի փախստեան հետ միասին հա-
մաձարակը բռնեց շրջակայները և սկսեց կատա-
ղի կերպով հարուածել մարդկանց սարերի
լանջերում և Շիմրան, Լար, Թալիշ ամա-
րանոցներում: Վտանգ կայ, որ երբ բնակիչ-
ները վերադառնան ամառանոցներից, համա-
ճարակը նորից կարող է տարածվել Թէհրա-
նում, ինչպէս այդ պատահեց 1892 թ. իսկ
լրայի ժամանակ:

Մեր ունեցած տեղեկութիւնները ցոյց են
տալիս, որ խօլբայի հասնել է մինչև Զազլին
շրջակայները. Բաշտ և Էնդլէն դեռ նա չէ մտն-
ել թէ կարանտինային խիստ միջոցներ ձեռք
առնվեն, հաւանական է, որ խօլբայի Զազլի-
նի վրայով չը կարողանայ Կաֆլան-քուէն
(Կաֆլանի սարը) անցնել և մտնել Աւարկա-
տականի նահանգը:

Պարսկաստանի դիպլոմատիական մարմնի
մէջ նոր փոփոխութիւններ կատարելու նշան-
ներ են երևում: Վաշինգտոնի պարսիկ ձեռք
պան Մուֆախամ-դօվէն նշանակվել է Վիէնայի
դեսպան, Նարեման խանի տեղ, իսկ վաշինգ-
տոն ուղարկվել է իբրեւ դեսպան Թիֆլիսի
նախկին ընդհանուր հիւպատոս Մուսթաֆա-
Միլլը: Թիֆլիսի այժմեան հիւպատոսը յետ

